

58

Դ-95

ԼՈՒՍ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ-ՍՈՅ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐՉ.

Ա.ՇԽ. Ս. Ա.ԱԽԵԶ. ԴՊՐՈՅԵ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՆԻԹՅՈՒՆԻ և ԱՇԽԱՏԱՆՔ № 4
Խմբ. Մ. Զառաֆյանի յել Ա. Սրարատյանի

ՊՏՈՒՂՆԵՐ

ՅԵԿ

ՍԵՐՄԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 6-1927

JUL 20th

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՉԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 4 «ՃՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՕՇԽԱՑՈՒՔ» № 4
Խմբ. Մ. Զառաֆյանի յիշ Ա. Արարատյանի

58
Դ-95 հ.

1003
11109

ՊՏՈՒՂՆԵՐ ՅԵՎ ՍԵՐՄԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ


8 6 9 6 4 9 6 - 1 9 2 7

Գրառեալգար № 338ր. հ. 613 Տիրաժ 6000
Պետհրատի յերկորդ տպարան Յերեվանուս 914



1. ՔԱՆԻ ՍԵՐՄ Ե ՏԱԼԻՍ ԲՈՒՅՍՆ ԱՄԵՆ ՏԱՐԻ

Ահա, մի հարց, վորի պատասխանը մեկ անգամից տալ չեք կարող, մինչև վոր առանձնապես շներաքրքրվեք, անձամբ չկերցնեք այս կամ այն բույսի պատուզը, բաց շանեք և չհաշվեք։ Ահա, ձեզ խնձորենին՝ ծածկված բազմաթիվ պտուղներով։ Վերցրեք մեկ հատ խնձոր, կտրեցեք ուղիղ մեջտեղից և հաշվեցնք, թե քանի սերմ կա նրա մեջ։ Կարո՞ղ եք այժմ հաշվել, թե վորքան սերմ ե տվել ամբողջ խնձորենին։ Մի քիչ կդժվարանաք, բայց վերջի-վերջո հնարավոր ե հաշվել։



Դէ 1. Խաշխալ

Հիմա փորձեցեք խաշխալի սերմերը հաշվել, գուցե ձեզ հաջողվի մեկ-յերկու հատ հաշվել, բայց յեթե ձեզ առաջարկեն մի ամբողջ արտի խաշխալի սերմերը հաշվել, արդեն դուք կհրաժարվեք, վորովհետեւ գիտեք, վոր նըանց թիվն այնքան շատ ե, վոր անհնարին ե հաշվել։

Մի խնձորից կարող եք 5-10 սերմ հանել, մի

իսաշխաժից—2500-3000, խոտաբուլսերից կերպով
տալիս ե անհամար սերմեր, մոլեխինդը—10,000,
յեզան լեզուն—14,000, սինծը—միլիոնավոր։ Այս
թվերն իմանալուց հետո ձեր մեջ խսկունք մըուռ
հարցը կծագի.

2. ԲՈՒՅՍԻՆ ԻՆՉ ՊԵՏՏ ԵՆ ԱՅԴՔԱՆ ՍԵՐՄԵՐ

Հարկավոր ե այժմ մտածել թե ի՞նչ ծառայու-
թիուն են անում սերմերը բույսին։ Սերմերը հաս-
նում են ամառվա վերջերին և աճնանը, իսկ նոր
բույսերը դուրս են գալիս միայն հետեւալ գար-
նանը։ Նշանակում ե սերմերը պետք ե ձմեռեն-
ի հարկե, նրանցից շատերը կփշանան ցըտից, խո-
նավությունից և միմիայն մի քանիսին կհաջողվիր
գարուն տեսնել և ծլել։ Այստեղից կարող եք չեղ-
րակացնել, վոր բույսին անհրաժեշտ ե շատ սեր-
մեր ունենալ։ Յեթե, որինակ մեխակը միայն մի
քանի սերմեր ունենար և ձմեռը բոլորն ել փշա-
նային, հետեւալ տարին վոչ մի հատ նոր մեխակ
չեր բանի։

Բայց սրանով սերմերի բազմաթվության նշա-
նակությունը չվերջացավ։ Գարնանը կենդանի
մնացած սերմերն սկսում են ծլել, բայց նրանք
բոլորն ել հարմար տեղ չեն ընկնում։ Նրանցից
մի քանիսն ընկած են լինում ջրերի մեջ, մի քա-
նիսը՝ քարերի, ուրիշները՝ ձանապարհների. վրա


կամ շատ խիտ բուսած խոտերի արանքում և այն։
Ծատ քչերին ե հաջողվուս այնպիսի աեղ ընկնել
վոր ազատ առանց ուրիշ բուսերից նեղվելու
կարողանան ծլել և նոր բույս տալ։ Ահա, թե
ինչու բույսերը տալիս են այդպիսի մեծ քանա-
կությամբ սերմեր։ Նրանց մեծ մասը վոչնչանուն
ե այս կամ այն պատճառով։ Ուրեմն բազմա-
սերմությունը բույսի սերնդի ապահովության մի-
ջոցն ե։

3. ՍԵՐՄԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Յեթե ամեն մի բույսի ոված բազմաթիվ սեր-
մերը, նենց այնտեղ բույսի կողքին թափվեցին և
այնտեղ ել ծլելին, այդ սերմերի աղագա կրանքը
մեծ դժվարությունների պիտի հանդիպեր Սեր-
մերից դուրս յեկած մատաղ ծիլերը, մեծանալով
իրար կիսեցնելին, նրանց համար վոչ տեղը կրա-
վականանար, վոչ լույսը և վոչ ել մնունգը։

Այժմ ասացեք ինդղեմ, կարելի՞ յե բանջարա-
նոցում խիտ սերմեր ցանել։ Ի՞նչ պետք ե անեք
յերը նկատեք, վոր ցանաճները շատ խիտ են
բուսել։ Յեթե գուք աղահություն անեք կամ ան-
դիառությամբ թուզ տաք, վոր նրանք շարունակեն
այդ վիճակում առել, գուք լավ բերք չեք ստա-
նա։ Բույսերը միմյանց կիսեղդեն և նրանցից վոչ
մեկը չի զարգանա։

Ահա, այս տեսակետից պառուղներն ու սերմերն ունեն բազմաթիվ հարժարություններ. վորագեսղի




Նկ. 2. Սերմերի տարածումը

կարողանան նման վտանգից իրենց կյանքն ազատել: Նրանք այդ հարժարությունների շնորհիվ կարողանում են մայր բուսից հեռանալ, միմյանց գլխի չկիտվել և ցրվել զանազան կողմեր: Այնպես վոր, իեթե շատ անգամ ձեզ ասում են, թե բույսը կենդանուց տարբերվում է նրանով, վոր անշարժ մի տեղում մեխված ե, դա այնքան ել ճիշտ չե. Բուսերն ել տեղից-տեղ շարժվում են սերմերի:

և պառուղների կերպարանքով և գնում են այնպիսի տեղեր, վորակեղ իրենցից չկան:

4. ՈՎ Ե ՏԱՐԱԾՈՒՄ ՆՐԱՆՑ

Շատ անգամ դաշտային զբոսանքից տուն վերադառնալիս ձեր շորերի վրա նկատած կլինեք զանազան բուսերի սերմեր կպած: Այս սերմերն իրենց վրա ունեն բազմատեսակ կեռեր և կպչաններ, վորոնց միջոցով կպչում են մարդու շորերին



Նկ. 3. Բամբակի պառուղը


կամ մոտից անցնող կենդանիների բրդերին: Յեթե ուշադրությամբ հետևեք հանգից վերադառնող վոչխարներին կովերին կամ ձեզ հետ զբոսանքի դուրս յեկած շանը կտիսնեք, վոր նրանց մարմինը ծածկված էնման պառուղներով: Կենդանիները

մեկ տեղից՝ մշուսը տեղափոխվելիս իրենց հետ
տանում են այս պտուղները և պառկում են գետ-
նի վրա կամ քսվում քարերին և այլ առարկա-
ների՝ այդ սերմերը կամ պտուղները, թափվում
են. Այսպես ուրեմն կենդանիներն իրենց հետ
տանում և տարածում են բույսերի սերմերը:

Հիմա տեսնենք ինչպես են տարածվում այն
պտուղների սերմերը, ինչպիսիք են բալը, կե-
ռասը, խնձորը, մողը, մորին և այնու Այդ պտուղ-
ների համեղ ու փափուկ մասը շատ զրավիչ և
թե մարդու և կենդանիների համար, իսկ նրանց
գեղեցիկ գույնից ու հոտից խոն մարդ չի կըշ-
տանում: Ինչպես վոր ծաղիկների պայծառ գույնն
ու անուշ հոտը բույսի համար մի առանձին նշա-
նակություն ունի, այնպես ել պտուղների համն
ու հոտը բույսի կյանքի համար խոշոր նշանակու-
թյուն ունի: Պտուղներն իրենց պայծառ գույնի
շնորհիվ աշքի լեն ընկնում և այդ գույններն ստա-
նում են ուղիղ այն ժամանակ, իրը պտուղը հա-
սած է: Խակ պտուղը միշտ կանաչ և լինում և
դառնահամ: Պտուղների համը, բաղցրությունը
և հոտը վոչ միայն մարդուն են զրավում, այլ և
շատ կենդանիների, վորոնք այս ու այն կողմ ընկած
վորոնում են և ուտում: Հենց բույսի շահն ել այդ
և պահանջում: Ինչու պետք ենա կենդանիներին

կամ մարդուն ձրիաբար կերակրի, դրանից ինչ
ոգուա նրա համար:

Շատ կենդանիները, մանավանդ թռչուններ
նյութի պատուղներն ուտելուց հետո, նրանց կոշտ
ու անմարս սերմերը ցրում են գես ու դեն:
Բացի անմարս լինելը, ուշագրությամբ նաև եցեք
թե նրանք ինչպիսի ամուր կճեպով են ծածկված:
Հնարավոր ե միթե նրանց ծամել: Պատահում ե,



վոր կենդանիները փոխա-
նակ կորիգները դուրս
ձգելու, կուլ են տալիս,
հասկանալի լե, վոր կեն-
դանումարտողության որ-
դաններում նա մնում և
անփոփոխ և նրա աղքի
նե, 4. Կոաստոկի պտուղը հետ գուըս ընկնում:
Ահա, այս միջոցով ել սերմերը տարածվում են
տեղից-տեղ: Ապագայուն, յերը արդ սերմերն
սկսում են ծլել հենց նույն այդ կենդանիների
աղը գառնում և նրանց ծլերի համար մնունդ:

Ուրեմն, բույսերի սերմերն ու պտուղները տա-
րածվում են կենդանիների միջոցով — զագանների,
թռչունների, մարդու և այլն:

Բացի կենդանի արարածներից բույսերի սեր-
մերի տարածման մեջ մեծ դեր ե խաղում և քամին:

Հավաքեցեք ուռենու, բարդու, և նման բոլոսի սերմերը և ուշադրությամբ դիտեցեք նրանց կազմությունը։ Նրանցից ամեն սեկը ծածկված է բարակ մազիկներով։ Փչեցեք նրանց ողի մեջ և գուք կաեմներ, թե ինչպես նրանք լոյսում են ոգում և ոլանում հեռու տարածություններ։ Ամենաթեթև քամին նրանց քշում տանում է շատ հեռուները և յերբ քամին հանդարտում է, սերմերը կամաց կամաց իջնում են ցածր։



Ակացիայի սերմեր ել քաղցր համ կամ անուշ հոտ։ Նրանց սերմերը շրջապատած են յինում բարակ թաղանթե թերոսով, յերբեմն բավականին մեծ, վոր չիշեցնում են սավառնակներին։ Ազգպիսի հարժարություններով զինված սերմերը կոչվում են թեփափորներ։

Փորձեցեք մի այդպիսի սերմ ողի մեջ բաց

թողնել և աեսեք, թե նա ինչպես է ցած ընկնում։ Դուք կնկատեք, վոր նա շարունակ պատշաճներ և կատարաւ իր շուրջը և շատ դանդաղ ե իջնում։ Ազգպես ել յինումները ընության մեջ, ծառի բարձր դագաթից սերմերը դանդաղ իջնում են ցածր, իսկ այդ ժամանակ քամին նրանց հեռացնում ե ծառից և տանում ուրիշ տեղեր։ Ուրեմն սերմը չի ընկնում իր հին ծառի տակ, վորտեղ ստվերը կխանդարնը նրա ծլելուն, այլ ավելի հեռու և ազատ տեղ։

Սցժմ մենք կարող ենք մի ընդհանուր լեզրակացություն անել։

Յուրաքանչյուր ըստս տալիս և մեծ քանակությամբ սերմեր։ Այդ բազմաթիվ սերմերը նրա համար են, վոր ըստյան կարողանալ բազմանալ յեվ տարածվել։ Սերմերի տարածմանն ոգնում են կենդանիները յեվ քամին։ Սերսերի կերպարանքի տակ ըստյանը հաճախ ձմեռում են։

Բուշերի բազմաթիվ սերմերը մարդու համար ել շատ մեծ ոգուտ են։ Առանց նրանց մարդը չպիտի կարողանար հողագործությամբ պարապել և ապրել։ Յեթե գյուղացին ցանում է, նա հաշվ ե անում, վոր հաջորդ տարին, վոչ միայն իր սերմացուն պիտի յետ ստանա, այլ և շատ ավելի սերմեր, վորոնք նրա համար պիտի ծառալեն վորպես սնունդ։


կան բույսեր, վորոնց թռչելու հարժաքությունն ել և մարդն ոգտագործում. — որինակ բամբակի սերմի մաղիկները, վորից մենք բազմատեսակ դորձվածքներ ենք պատրաստ եմ:

Տաք յերկիրներում բամբակի բույսը մոտ յերկու մետր բարձրություն և ունենում: Նրա վրա բացվում են խոշոր, փոսկեգույն ծաղիկներ, վորոնք տալիս են մեծ-ահեղ պառակներ: Ազդ պառակները համելուց հետ պատռվում են և նրանց միջից դուրս են թափվում մաղիկներով ծածկված սերմերը: Առանձին մեքենաներով այդ բարակ մաղերը հավաքում են, սերմերից ել առանձին յուղ են քամում և նրանից ոճառ պատրաստում: Բարակ մաղիկները հենց այն բումբակն ե, վորից դորձում են զանազան կտորեղեններ: Սա ամենահժան նյութն ե: այդ պատճառով մարդկության մեծ մասը նրանից և պատրաստում իր հազնելիք կտորները:

5. ԾԱՂԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բայթնու ծաղկի կազմությունը. — Ծաղկի կազմության հետ ծանոթանալու համար վերցնենք բարենու ծաղիկը: Սա նստած և մի բարակ կոթի վրա, վար կոչվում է ծաղկակիթ: Ծաղկակիթի վերին մասը, վորի վրա աեղազարված և ծաղիկը, կոչվում է ծաղկւկալ: Ծաղկի շուրջը, ներքեսում իրար կողքի շարված են հինգ հատ կանաչ տերեներ: Սրանք միասին կազմում են ծաղկի բաժակը:

Բաժակի առանձին տերեփկները կոչվում են բաժակաթերթեր: Բաժակաթերթերից հետո դալիս են հինգ հատ սպիտակ թերթիկներ, վոր դարձյալ որջանաձեւ շարված են իրար կողքի: Սրանք ել կազմում են ծաղկի պսակը. պսակի առանձին թերթիկները կոչվում են պսակաթերթիկներ: Հեռացնելով պսակաթերթիկները՝ ծաղկի սերսում նկատում ենք բարակ թելիկները: Այդ թելիկները կոչվում են առեջները: Ցուրաքանչյուր առեջ վերջանում է մի գրլ: Խիկով: Վերջինը փոշով լիքը լինելու պատճառով կոչվում է փոշանթոթ: Առեջների մեջ տեղում գըտներգում ե ծաղկի վար սանդը: Սրա վերիի լայնացածմասը կոչվում է սպի, միջին թելանման մասը կոչվում է կալիկալ: Ծաղկակոթի վերին մասը՝ սոնակ, գույնը՝ սպին: Սոնակը մասը՝ սոնակ: Սոնակը մասը՝ սոնակ: Սոնակը մասը՝ սոնակ: Սոնակը մասը՝ սոնակ: Սոնակը մասը՝ սոնակ:



Բայթնու ծաղկի մասերը
նկ. 6

1. Ծաղկակոթի վերին մասը՝ սոնակ, գույնը՝ սպին: 2. Ծաղկակալ, 3. Բաժակաթերթի վերին մասը՝ սոնակ, գույնը՝ սպին: 4. Պատճառութերթի վերին մասը՝ սոնակ, գույնը՝ սպին: 5. Սոնակ, 6. Սոնակը մասը՝ սոնակ, գույնը՝ սպին: 7. Սոնակ, 8. Վարսանդի սպին: Սոնակը մասը՝ սոնակ: Սոնակը մասը՝ սոնակ: Սոնակը մասը՝ սոնակ:

Նըգում են փոքրիկ սպիտակ հատիկներ, դրանք սերմնաբղբաջներն են, վորոնցից հետագալում դարձանում են սերմերը։ Այսպիսով, ուրեմն, բալենու ծաղիկը բաղկացած է բաժակից, պոակից, առեջներից և վարսանդից։

Բոլոր ծաղիկներն ել անպատճառ արդ ժամանելը չունեն։ Կան ծաղիկներ, վորոնք այս կամ այն ծաղկամասերից զուրկ են, որինակ կակաչի ծաղիկը զուրկ է բաժակից։ Յերբ ծաղկի բոլոր մասերը կան, ծաղիկը կոչվում է լրիվ, իսկ յերբ այս կամ այն մասը պակասում է—թերի։


6. ԲԱԺՎԿԻ ՅԵՎ ՊՍՎԿԻ ԴԵՐԸ

Մինչև ծաղկի բացվելը՝ բաժակն ու պսակը ծածկում են ծաղկի մյուս քնքույշ գործարաններ—առեջներն ու վարսանդը և պաշտպանում են նրանց զանազան վտանգներից։ Այդ պատճառով շատ անգամ ծաղկի բաժակը կոչվում է արտաքին ծածկոյթ, իսկ պսակը՝ ներքին։ Բաժակի թերթիկները յերբեմն միացած են լինում միմյանց հետ, նույնը և պսակաթերթիկները։ Յերբ պսակաթերթիկները նույն ձևն ու մեծությունն ունեն, ծաղիկը կոչվում է կանոնավոր, իսկ յերբ տարբեր՝ անկանոն։ Բալենու ծաղիկը կանոնավոր է, իսկ մանուշակինը՝ անկանոն, վորովինեակ նրա պսակաթերթիկները միմյանցից զանազան վում են իրենց ձևով ու մեծությամբ։

Բաժակն ու պսակը պաշտպանում են առեջներն ու վարսանդը վոչ միայն մինչև ծաղկի բացվելը, այլ և նրանից հետո։ Հայտնի լի, վոր գիշերը կամ վատ յեղանակներին ծաղկիկները կամ գլուխները ցած են զցում և կամ վակում են իրենց ծաղկաթերթիկներն ու բաժակաթերթիկները։ Յերկու գեպքում ել ծաղկիկը մինպատճառ է ունենում, այն եւ պաշտպանվել անձրևի կաթիւներից կամ ցողից, վորոնք շատ վատ ազդեցություն ունեն ծաղկի ներսի գործարանների վրա։

7. ԱՐԵՉՆԵՐԻ ՅԵՎ ՎԱՐՍԱՆԴԻ ԴԵՐԸ

Առեջներն ու վարսանդը ծաղկի ամենակա-



Առեջ.

Նկ. 7 Վարսանդ.

բերը գործարաններն են, վորովինեակ դրանք են առաջ բերում պտուղ և սերմ։ Առեջները բաղ-

կացած են առեջաթերից և նրա վրա նստած փոշանոթից: Վերջինս լինքն ե փոշով, վոր հասունանալում հետո ցրվում է դեղին, մանրիկ փոշուձեռվ:


Տարբեր ծաղիկներ տարբեր թվով առեջներ ունեն. կան ծաղիկներ, վոր միայն մի հատիկ առեջ ունեն, կան ծաղիկներ ել, վոր ունեն միքանի տասնյակ առեջներ:

Յերբեմն ծաղկի մեջ լինում են միայն կամ առեջներ և կամ վարսանդ: Միայն առեջներ ունեցող ծաղիկը կոչվում է առեջածաղիկ, միայն վարսանդ ունեցողը՝ վարսանդածաղիկ: Առեջները ծաղկի արական գործարաններն են, վարսանդն իգական. այդ պատճառով ել առեջածաղիկը կոչվում է նաև արական, վարսանդածաղիկն իգական: Յերբ արական և իգական ծաղիկը միենույն բույսի վրա լի լինում, բույսը կոչվում է միատուն, իսկ յերբ տարբեր բույսերի վրա՝ կոչվում է յերկտուն: Տիլին, կաղնին, կեշին միատուն բույսեր են. նրանց արական և իգական ծաղիկները գտնվում են միենույն ծառի վրա: Հացենին, ուսենին, բարտին յերկտուն են, վորովնետե նրանց իգական ծաղիկները մի ծառի վրա յեն գտնվում, արականները՝ մի այլ ծառի վրա:

8. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ ՅԵՎ ՊՏՂԻ ԱՌԱՋԱՆԱԼԸ

Պտուղն ու սերմերն առաջանում են ծաղիկներից: Տեսնենք այժմ, թե այդ ինչպես ե կատարվում: Պտուղն առաջանում է վարսանդի սերմարանից, սերմերը՝ սերմարողը յներից: ուրեմն, վարսանդից են առաջանում թե պտուղը և թե սերմերը: Յեթե պոկենք վորեւ ծաղկից առեջները և ծածկենք ծաղիկն այնպես, վոր զրսից նրա վրա ծաղկափոշի չթափփի, կտեսնենք, վոր ծաղկից ալիևս պտուղ չի առաջանում: Այդ նշան է, վոր պտղի առաջացման համար, բացի վարսանդից, անհրաժեշտ են նաև առեջները: Առեջների փոշանոթներն, ինչպես զիտենք, լցված են ծաղկափոշով: Վորպեսզի սերմարանից պտուղ առաջանա, անհրաժեշտ ե, վոր այդ ծաղկափոշին ընկնի վարսանդի սպիթ վրա, ուրիշ կերպ ասած, անհրաժեշտ ե, վոր տեղի ունենա փոշումներ:

Յերբ վարսանդը հասունանում է, սպին ծածկրվում է կպչուն նյութով: ծաղկափոշին նրա վրա ընկած ժամանակ կպչում է այդ նյութին և փոքր ինչ անցած՝ սկսում է ծլել այնտեղ: Նրանից արձակվում է մի բարակ յերկար խոզվակ, վոր սոնակով անցնելով՝ մտնում է սերմ-



հարանը և համում սերմաբողբոջներին։ Հաս-
նելով սերմաբողբոջին՝ ծաղկափոշու խողովակը
նրա անցքով ներս և մտնում և միանում նրա
հետ։ Այդ միացումը կոչվում է բեղմավորում։
Յերբ տեղի յեւ ունենում բեղմավորումը, ծաղիկն
սկսում է թառամել. շուտով թափվում են նրա
պսակաթերթիկները, չորանում են առեջները,
չորանում են նաև վարսանդի սպին ու սոնակը.
մնում է միայն սերմաբանը, վորր սկսում է
արագ կերպով աճել, զարգանալ. Սերմաբանը
զարգանալով՝ զառնում է պտուղ, իսկ նրա մեջ
դժուվող սերմաբողբոջները՝ սերմեր։

Բազմաթիվ փորձերը ցուց են տվել, վոր
յերբ ծաղիկները փոշուավույ են իրենց մեջ գանգած
առեջների ծաղկափոշով, այսինքն սեփական ծաղ-
կափոշով, այն ժամանակ կամ բոլորսվին սերմեր
շեն տալիս, կամ տալիս են այնպիսի սերմեր,
վորոնցից առաջանում են միայն թույլ ու վախու-
բույսեր։ Յեզ լնդհակառակը, յերբ ծաղիկները
փոշոտվում են նման այլ ծաղիկի կամ, ավելի լավ,
ուրիշ տեղ գտնվող նման բույսի ծաղիկի ծաղկա-
փոշով, տալիս են արդեն առատ և լավ սերմեր։
Այդպիսի սերմերից առաջացած բույսերը լինում
են առողջ և ուժեղ։ Այս վերջին տեսակի փոշո-
տումը, յերբ ծաղկափոշին ծաղիկն ստանում է

ուրիշ նման ծաղիկներից և վոչ իր սեփական-
առեջներից, կոչվում է խոշածեվ կոշոտամ։
Բայց ինչպես ե կատարվում խաչածեւ փո-
շոտումը, ի՞նչպես ե ծաղկափոշին ընկնում մի-
ծաղկից մյուսի վրա, վոր յերբեմն նրանից ահա-
պին հեռափորության վրա յեւ գտնվում։ Դիտո-
ղությունները ցույց են տվել, վոր այդտեղ բույ-
սերին ոգնության են համում միջատներն ու
քամին։

9. ԾԱՂԻԿՆԵՐԸ ՅԵՎ ՄԻՋԱՏՆԵՐԸ

Ինչի համար ե ծաղիկների պարհառ զուք-
ուր։ Ինչի համար ե անուշ բուրմունքն ու բաղցր
հյութը։ Այդ բուրմը վոչ թե ձեզ ու մեզ համար
են, այլ զանազան մասր կենդանիների, վորոնց
վրա հաճախ նույնիսկ ուշազրություն չենք զարձ-
նում, բայց նրանց և ծաղիկների միջև շատ հին-
ժամանակներից սերտ բարեկամություն ե հաս-
տատվել։ Իմ խոսքը վերաբերում է միջատներին՝
թիթեռներին, մեղուներին, իշամեղուներին, զո-
նազան բգեզներին և ճանճերին։ Մեզուն տես-
նելով պայծառ ծաղիկը կամ զեռ հեռվից առնե-
րիվ նրա հոտը, բգլալով թոշում և ուղղակի զե-
պի այն. նա թողնում է նրա մեջ իր յերկար
լեզվակը, վորակեսզի ծաղիկի ամենախոր տեղից-
ձեռք բերի նրա բաղցը հյութը։ Մինչդեռ նո-

զբաղված ե ծծելով ծաղկի քաղցր հյութը, նրա վրա յեւ լցվում ծաղկի դեղին փոշին կամ «ծաղկավոշին» հասած առեջների գլխիկներից: Մեզուն այժմ թոշում ե հեռու, ուրիշ ծաղիկի մոտ «նոր հյութի յետից», իսկ իր մազիկների վրա, իր հետ տանում ե և ծաղկի փոշին: Նորից նա մոտենում է ծաղկին, խրում նրա մեջ լեզվակը և հագանական է, վոր այս ծաղկի մեջ թողնում է փոշու մի քանի հատիկ, վոր իր հոտ բերել եր: Այսպես միջատներն այցելելով ծաղիկներին՝ ցըռում են մի ծաղկի փոշին միուսի մեջ, իսկ ծաղիկներին հենց այդ ե հարկավոր:

Չափազանց գեղեցիկ են այդ փոշու հատիկները. յերբ նրան նայում ենք մարագիտակով: Նրանցից մի քանիսը նման են մանր վշերով կլոր գնդերի, ուրիշները մի փոքր յերկարացած, մյուսներն ունեն չորսկողմանի մարմնի տեսք՝ չորս անկյուններով: Ամեն մի բույսի փոշու հատիկները վորեն բանով տարբերվում են ուրիշ բույսի փոշու հատիկներից: Ահա թե ինչու ամեն մի բույսի փոշու հատիկը պետք ե անսպարման ընկնի նույն բույսի վարսանդի վրա, վորպեսզի նըրանից պտու դ ստացվի: Միսեսի փոշու հատիկը

պետք ե լնկնի սիսեսի վարսանդի վրա, լոբունը՝ լոբու, կարտոֆիլինը՝ կարտոֆիլի և այլն:

Ով վոր ուշագիր կերպով հետեւել ե իշամեղուներին և մեղուներին, նա անսպատճառ տեսած կլինի, թե ինչպես նրանցից ամեն մեկը սիրում ե այցելել վորոշ աեսակի ծաղիկների: Որինակ մեղուն առվույտի ծաղկի վրա յեւ միշտ նսպում և շարունակ մեկից մյուսը տեղափոխվում: Մեկ ուրիշ միջատ սիսեսի ծաղիկների վրա յեւ նստում, յերբորդն անանութիւն ե այն, մի խոսքով միշտ նույնատեսակ ծաղիկների վրա:

10. ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՊՏՈՒՂՆԵՐ ՅԵՎ ՍԵՐՄԵՐ

Փոշուտումից հետո տեղի յեւ ունենում բեղմնափորումն. այնուհետև սերմնարանը գարգանալով՝ սկսում է փոխարկվել պտղի, իսկ սերմնաբողբոջները՝ սերմերի: Սերմնարանի պատերից այդ ժամանակ զարգանում է պտղապատյանը: Մի քանի պտուղների պտղապատյանը չոր ու պինդ ե լինում, մյուսներինը՝ փափուկ ու հյութալի: Չոր ու պինդ պտղապատյան ունեն, որինակ, ընկույզը, արևածաղկի պտուղը, իսկ փափուկ ու հյութալի՝ բալը, սալորը, հաղարձը և այլն: Թե չոր և թե հյութալի պտուղները միաւսը լիւլ ըազմասերմ են լինում:

Միասերմ չոր պտուղների տեսակներն են
համարվում՝ ունդը, կտիկը յեվ ընկույզը։ Ունդի
պտղապատրաննը կաշեկերպ եւ և միացած սերմի
հետ, կտիկինը՝ կաշեկերպ եւ բայց միացած չե
սերմի հետ, իսկ ընկույզինը միացած չլինելով
հանգերձ՝ փայտային եւ Ունդի որինակ կարող
են լինել հաճարի, ցորենի և առհասարակ հացա-
բուլսերի սերմերը, կտիկի որինակ՝ տրեսածաղկի
սերմը, իսկ ընկույզինը՝ ընկույզը, տխիլը և ալին։
Այս միասերմ չոր պտուղները հասունացած ժա-
մանակ չեն ճեղքվում։ Բազմասերմ չոր պտուղ-
ների տեսակներ են՝ պատիճը, փոճոկը յեվ աթկ-
ղիկը։ Սրանք բոլորը հասունացած ժամանակ ճեղք-
վում են և սերմերը ցրվում։ Պատիճը միախինձ
պառուղ եւ լոբին, ակացիան, սիսեռը և ալին
այդպիսի պտուղ են տալիս։ Փոճոկը յերկխինձ
եւ սա տարբերվում եւ պատիճից նրանով, վոր
նրա միջով յերկայնությամբ անցնում եւ մի
միջնապատ, վորի վրա կպած են սերմերը. կա-
ղամբի, շահապրակի պտուղը փոճոկ եւ։ Սրկղիկը
միախինձ կամ բազմախինձ եւ լինում. այդպիսի
պտուղ ունեն խաշխաշը, մանիշակը և ալին։ Սրկ-
ղիկը բացվում եւ անցքերով կամ կափարիչով։

Հյութալի պտուղների տեսակներ են հաւար-
փուտ հատապտուղը յեվ կորիզավոր պտուղները։

Հատապտուղն իր հյութալի միջուկի մեջ բազ-
մաթիվ սերմեր եւ պարունակում։ Հատապտուղ-
ներ են՝ խաղողի, հաղարձի պտուղները։ Կորի-
զավոր պտուղներն ունեն մի սերմ՝ ծածկված
պինդ, շատ կարծր պատլանով վերջին տեսակի
պտուղներն են՝ բալը, սալորը, ծիրանը, դեղձը և
այլն։

Հյութալի պտուղների շարքին են պատկա-
նում նաև խնձորը, տանձը, սեխը, վարունդը և
այլն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Քանի սերմ և տալիս բույն ամեն տարի	3
2. Բույսին լինչ պետք են այդքան սերմեր	4
3. Սերմերի տարածում	5
4. Ո՞վ է տարածում նըանց	7
5. Ծաղկի կազմությունը	12
6. Բաժակի և պսակի գերը	14
7. Առեջների և վարսանդի գերը	15
8. Ծաղիկների փոշոտումը	17
9. Ծաղիկները և միջատները	19
10. Զանազան տեսակ պտուղներ և սերմեր	21



13 967

ԼՈՒԾ ԵՆ ՏԵՍԱՅԻ ՆՈՒՅՆ ԳՐԱԴ

ԳԻՒՅՐ

1.	Տերեաթափ և աշնան գույներ	10 կ.
3.	Թոչունիների չուն	10 »
8.	Ինչ վոր կը ցանես, այն ել կը հնձես	10 »
11.	Բամբակ.	10 »
12.	Տորփ, բարածուխ և նավթ	10 »
16.	Մեղու	15 »
20.	Հանքեր	15 »
21.	Շերամ	10 »

ՇՈՒՏՈՎ ԼՈՒԾ ԿՏԵՍՆԵՆ

2.	Կենդ. հարժարացումը և ձմեռալին քունը.	
5.	Հող և նրա մշակումը.	
6.	Բանջարանոց.	
7.	Ազգի.	
9.	Մարզագետին	
10.	Ող և ջուր.	
13.	Կովի կերը և խնամքը.	
14.	Կաթնամթերքներ.	
15.	Ընտանի թոշունիների խնամքը.	
17.	Գյուղատնտ. մեքենաներ և գործիք- ներ	
18.	Ակվարիում և ափբարիում	
19.	Ի՞նչպես կազմել հերթարիում	
22.	Անտառ.	

ԳԻՒՅՐ | 0 ԿՈՂ